



ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀԻՍՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱԾՈՒԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Հասցե Գ. Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32, 3301: Հեռ. (+374 285) 5 25 63 (+374 91) 45 90 47 (+374 77) 45 90 47

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երևան, Արշակունյաց 2: Ծավալը՝ 1 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1200: ՊՇԿԸ՝ 100 ԴՊՅ Ս



# Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am

Աղաչում էմ ձեզ, եղբայրք, որ բոլորդ էլ նույն խոսքը ունենաք, եւ ձեր մէջ երկպառակութիւններ չլինեն...

Պօղոս Առաքեալ

Այցեխարս

Արայիկ Սաշիկի Պարոնյան. ծնվել է 08.04.1968 թ. Գորիսի տարածաշրջանի Քարաշեն գյուղում: 1975-1985թթ. սովորել է ավարտել է Տեղ գյուղի միջնակարգ դպրոցը: 1988-1989թթ. աշխատել է Գորիսի քաղկոպում՝ բանվոր, իսկ 1989-1994թթ. ուսանել է Երևանի ժողովրդական համալսարանում: 1990-1991թթ. կրկին աշխատել է Գորիսի քաղկոպում, հետո՝ 1991-1995թթ., «Իշխանասար» կոոպերատիվում՝ գլխավոր հաշվապահ: 1997թ. աշխատանքի է անցել ՀՀ կենսաթոշակային եւ զբաղվածության Գորիսի տարածքային բաժանմունքում՝ առաջատար մասնագետ: 1998-2005թթ. զբաղեցրել է ՀՀ կենսաթոշակային եւ զբաղվածության հիմնադրամի (ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամ) Սյունիքի մարզային վարչության գլխավոր մասնագետ-իրավաբանի, վարչության պետի պաշտոնը: 2005թ. ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամում աշխատել է ֆինանսաբյուջետային եւ հաշվապահական հաշվառման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր հաշվապահի տեղակալ, իսկ այնուհետեւ՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմում՝ ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետի տեղակալ: 2005-2009թթ. ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմում զբաղեցրել է ՀՀ աշխատանքի պետական տեսչության պետի տեղակալի պաշտոնը (աշխատանքի գլխավոր պետական տեսուչի տեղակալ): 2009-2018թթ. ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի սոցիալական ապահովության պետական ծառայության պետի տեղակալն է: 1993 թվականից Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է: Ձինապարտ է, շարքային: Ամուսնացած է, ունի երկու երեխա:

Խոսքը Ընտրողին

## Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սեւերես չմնա...

ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ


Սյունիքի եւ Վայոց ձորի մարզերի սիրելի՛ հայրենակիցներ  
Ես արդեն տեղեկացրել եմ ձեզ, որ առաջադրվել եմ Աժ պատգամավորի թեկնածու, հասցրել եմ այս օրերին մի քանի անգամ (տարբեր հարթակներից) ներկայացնել եւ առաջադրման մոտիվները, եւ պատկերացումներս խորհրդարանի մասին, եւ անելիքներս:  
Սակայն դեկտեմբերի 9-ի քվեարկությունից առաջ մեկ անգամ եւս ուզում եմ խոսք ուղղել ձեզ: Այո՛, ես Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ եմ եւ առաջադրվել եմ քաղաքական այդ ուժի կողմից:  
Եվ դա եղել է իմ գիտակցված քայլը: Պատկերացրել եմ նաեւ քննադատության մասշտաբները, որ պետք է ուղղվեին իմ դեմ:  
Եվ, այդքանով հանդերձ, խոստովանել ու խոստովանում եմ, որ ՀՀ-ն երկիրը գլխավորելու տարիներին, բազմաթիվ ծառայությունների հետ մեկտեղ (որոնց վերաբերյալ ընդունված չէ խոսել մեր օրերում), թույլ է տվել նաեւ լուրջ թերություններ, որի համար մեղավոր է եւ ամբողջ կուսակցությունը, եւ կուսակցության ամեն մի անդամ:  
Բայց իրականության հետ առերեսվելու այս ժամին ելքն ամենեւին էլ կուսակցությունից եւ պատասխանատվությունից փախչելը չէ ու, «ամպոտ ոտքերով» մեկ այլ կուսակցության մեջ հանգրվանելը:  
Ուստի եւ գերադասեցի մինչեւ վերջ մնալ դիրքում՝ եւ անցյալի համար իմ բաժին պատասխանատվությունը կրելու, եւ կուսակցության ինքնամաքման գործընթացին մասնակցելու, եւ ցեղակրոնության ու նշոյեցյան գաղափարներով վերընծյուղվող ՀՀ-ով երկրի հզորացմանը համեստ ներդրում բերելու համար:  
Միեւնույն ժամանակ՝ ավելորդ չեմ համարում նշել՝ իմ գիտակցական կյանքում հանրությանը միշտ էլ ներկայացել եմ սեփական դեմքով, իմ արհեստավարժությամբ ու մեծ Բակունցի պատվիրանով՝ «Աշխարհքս միշտ կմնա, ասա մարդը սեւերես»

չմնա»:  
Ուստի եւ այսօր, թող չափազանցություն չհամարվի, բոլորիդ աչքերին ուղիղ նայելու վաստակած իրավունքով եմ ներկայանում:  
Որպես մարդ, որպես հայ, որպես քրիստոնյա իմ ապրած տարիներին թույլ չեմ տվել մի սխալ, որի համար հիմա պիտի ամաչեմ:  
Սյուն կողմից՝ ինչպիսի քննադատության էլ ենթարկվի ՀՀ-ն (տեղի կան անտեղի), միեւնույն է, նրա որդեգրած գաղափարախոսությունը հայ ժողովրդին ուղեկցելու է զալիք օրերում, ինչպես ուղեկցել է նախորդ հազարամյակներում՝ Հայկ նահապետից սկսած:  
Եվ Սյունիքն է եղել ցեղակրոնության բնօրրաններից մեկը հայոց մեջ, ինչի շնորհիվ էլ պատմության քառուղիներում դիմացել ենք փորձություններին, ինչի համար էլ կանք ու լիներելու ենք:  
Հենց այդ գաղափարներով էլ գնում եմ խորհրդարան:  
Գնում եմ տարիների փորձս, մասնագիտական կարողություններս ծառայեցնելու երկրի օրենսդիր մարմնին:  
Գնում եմ իմ պրոֆեսիոնալ ձեռքբերումներով՝ համոզված լինելով, որ հայոց խորհրդարանը 21-րդ դարում այլեւս իրավունք չունի լինել ոչ պրոֆեսիոնալ:  
Գնում եմ խորհրդարան, որպեսզի ձեզանից յուրաքանչյուրի մտածումներն արտահայտեն այնտեղ, որպեսզի մեր լեռնաշխարհի հիմնախնդիրները լուծելու, մեր մենող գյուղերը փրկելու, Սյունիք ամրոցը հզորացնելու ուղիներ որոնեն:  
Եվ այդ ամենը՝ ձեզ հետ, յուրաքանչյուրիդ հետ, քանզի մշտապես ձեզ հետ եմ լինելու, ինչպես եղել եմ տարիների ընթացքում, թեեւ աշխատանքիս վայրը մայրաքաղաքում էր:  
Ու այդ ամենի համար յուրաքանչյուրիդ երաշխավորությունն եմ ակնկալում, ամեն մեկիդ աջակցությունը:  
Ու այդ ամենի համար խնդրում եւ հորդորում եմ՝ քվեարկությունից առաջ մի կողմ թողնել զգացմունքայնությունը, վեր կանգնել մոլեգնող հուզական մթնոլորտից եւ առաջնորդվել ողջամտությամբ, երկրի համար պատասխանատվությամբ:  
Շնորհակալություն համագործակցության եւ գործընկերության համար:  
Բարի ընտրություն բոլորիս:  
Կեցցե Հայաստանի Հանրապետությունը:  
Կեցցե լեռնահայաստան Սյունիքը՝ հայոց պետականության բոլոր ժամանակների ողնաշարը:  
ՀճՅՈՒՄ՝ ձՅՆՅՈՒՄՅՅ

Արայիկ Պարոնյանի հետ հարցազրույցը՝ 2-րդ էջում







Գարեգին Նժդեհի հուշահամալիրը Կապանում

# Երբ Հայաստան են ասում

Երբ Հայաստան են ասում,  
Երկնքի համ ու բույրից,  
Աստվածների համբույրից  
Հարբում է հողը նորից,  
Ու բարդիներն են նազում:

Երբ Հայաստան են ասում,  
Նուրը ճշում է քարին,  
Սարը կանչում է սարին,  
Եվ բողբոջում է բարին,  
Եվ չարիքն է նվազում:

Երբ Հայաստան են ասում,  
Քարն արթնանում է բնից,  
Սիրտս թռնում է բնից,  
Եվ կակաչները բլրից  
Դեպի սարերն են վազում:

Երբ Հայաստան են ասում,  
Ճարում է նուրը կրքից,  
Քրտնում է վազը դրկից,  
Եվ աստղերը երկնքից  
Ականջիդ բան են ասում...

Երբ Հայաստան են ասում,  
Արմատներով զորացած,  
Հնության մեջ խորացած,  
Նորերի մեջ նորացած  
Քերդ ու ոստան են ասում:

Համո Սահյան

Խոսքի ճանապարհ

**ՁԾՁԱԷԻ ä²ðàÜÜ²Ü. §Ð³ ë³ ñ³ İ áóÃláóYÁ**  
**ÈáñÑñ¹³ ñ³ YáòÙ Éáõñç ÁY¹¹ ÇÜáóÃÛ³ Y á³ Ñ³ Yç ;**  
**½• áòÙ, »ð³ Û¹¹ »ñÁ İ³ ñáÕ ; ëi³ YÓY»É ÐÐÎ -Y ;**

Վարբերություններին առնչվող հարց. Դուք նաև պաշտոնի բերումով այլուհանգիստի հետ միշտ էլ ակտիվ շփումներ եք ունեցել, ինչպես ես, թույլ տվեք ասել, ոմանց լավություն եք արել, ծառայություն մատուցել, ներդրության մեջ գտնվող մարդկանց նեցուկ եղել: Դեռաբարձր է՝ այդ մարդիկ նախընտրական այս օրերին խուսափում են շփվել Ձեզ հետ, թե՞ շարունակում են մնալ ընկեր, բարեկամ:

– Օգտվելով առիթից՝ ուզում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ում ճանաչում եմ: Եվ բոլոր նրանց, որոնց անձամբ չեմ ճանաչում, բայց կողքից լսել եմ իմ մասին ու գորակցություն հայտնել: Իհարկե, իշխանափոխությունից հետո ԶԳԿ-ի հանդեպ վերաբերմունքն այնպիսին է, որ իմ նախկին կուսակիցների ու նորերի մեջ որոշակի ընկճվածություն կա: Բայց պատգամավորի թեկնածու առաջադրվելու իմ քայլով զգացի, որ ոմանց մոտ կա ոգեւորվածություն: Մարդկային հարաբերությունները պահպանվել են, մնում են, ընտրությունները ժամանակավոր երեւույթ են, իրար հետ դեռ հարաբերվելու ենք...

– Տպավորություն ունենք, որ ներկա քարոզարշավը կամ ընտրապայքարը չի ընթանում գաղափարների, ժրգրների մրցակցությամբ, ինչպես նախկինում է եղել: Արդյո՞ք այդ հանգամանքը չի խանգարի, որ ապագայում ունենանք

արոՖեսիոնալների խորհրդարան:

– Բնականաբար, այդ խնդիրը կա: Զեղափոխական քայլերը կամ հեղափոխական պրոցեսներն ինձ համար ընդունելի չեն, ես ավելի գերադասելի եմ ճիշտ եմ համարում, որ յուրաքանչյուր երեւույթ էվոլյուցիոն ճանապարհով զարգանա, բնականորեն հասնի իր վերջնակետին:

– Դուք ԶԳԿ գաղափարական թեմի ներկայացուցիչ եք, այդ առումով կուզե՞նայինք մեկ-երկու դրույթ մատուցել՝ ցեղակրոնություն, Գարեգին Նժդեհ... Այդ գաղափարախոսության հատկապես ո՞ր դրույթն է կարեւոր մեր ազգային զարգացման ներկա հանգրվանում:

– Ի վերջո ի՞նչ է ցեղակրոնությունը: Նժդեհի ձեւակերպմամբ՝ ցեղակրոնությունը պաշտամունքն է մեր մեծ մեռելների: Նրանք, ովքեր արիացան իրենց հոյակապ նվիրումի մեջ, նրանք, ովքեր առյուծացան իրենց հերոսացման մեջ եւ նրանք, ովքեր իրենց կյանքն ու արյունը չխնայեցին հանուն մեր ազգի, հայրենիքի պաշտպանության գործի: Եւ քարոզչության առաջին թեզը լինելու է հետեւյալը՝ մեր մեռելների պաշտամունքն Ավարայրի ճակատամարտից մինչեւ Ապրիլյան պատերազմ, մենք պարտադրված ենք ունենալ նման պաշտամունք, այլապես որպես հայ տեսակ ուղղակի կվերանանք:

– Ակներեւ է Ձեր նվիրվածությունը Հայաստանի հանրապետական կու-

սակցությանը, այնուամենայնիվ, ովքե՞ր են ԶԳԿ-ի առաջնորդներից, լիդերներից մինչեւ այսօր Ձեզ համար օրինակելի, ընդօրինակման արժանի:

– Ինձ համար ԶԳԿ-ի բոլոր առաջնորդներն ընդունելի են եղել. կուսակցությանն անդամագրվել եմ Աշոտ Նավասարդյանի օրոք: Միշտ հավատարիմ եմ եղել նրան, այնուհետեւ Անդրանիկ Մարգարյանին, ԶԳԿ-ի այսօրվա նախագահին, բայց Անդրանիկ Մարգարյանն ինձ համար ավելի ընդօրինակելի է

– Պարոն Պարոնյան, այս ընտրություններին ընտրողն ինչո՞ւ հատկապես ձայն պիտի տա Հանրապետական կուսակցությանը:

– Որովհետեւ Հանրապետական կուսակցությունը 1998 թվականից մինչեւ այսօր եղել է քաղաքական բոլոր պրոցեսների մեջ՝ իր ունեցած սխալներով ու բացթողումներով հանդերձ, ունի կուսական լուրջ փորձ եւ առաջիկա ԱԺ-ում ինքը կարող է լինել շատ լուրջ, արմատական ընդդիմություն գործող իշխանություններին: Իսկ ուժեղ պետություն, ուժեղ պետականություն ունենալու համար բավական չէ ուժեղ իշխանություն լինել, անհրաժեշտ է ունենալ ուժեղ, կառուցողական ընդդիմություն:

– Իսկ ի՞նչ որակներ, հատկանիշներ պիտի ունենա պատգամավորը:

– Մեր օրերի պատգամավորը երբեք չի

(ես ամբողջ կյանքս ապրել եմ այդ սկզբունքով) հասարակությունից, փողոցից, հողից չպիտի կտրվի: Ամենավտանգավորն այն է, երբ պաշտոնյան, պատգամավորն ապրում է կաթինետային կյանքով:

– Բավականին հարցեր շոշափվեցին մեր զրույցի ընթացքում, այնուամենայնիվ, ի՞նչ կավելացնեք ասվածին:

– Կա մի այսպիսի աղոթք. տեր Աստված, տուր ինձ արիություն, ընդունեմ իմ մեջ այն, ինչը կա: Տուր ինձ հզորություն, փոխեմ իմ մեջ, ինչը կարող եմ փոխել: Եւ տուր ինձ իմաստություն, որ կարողանամ տարբերել առաջինը երկրորդից: Գիտե՞ք, ամեն ինչ չէ, որ մարդ կարող է իր մեջ փոխել: Բայց կան բաներ, որ մարդ ի գորու է իր մեջ փոխելու: Դա նաև պատասխանն է Ձեր այն հարցին, թե Հանրապետական կուսակցությունը զմո՞ւմ է ինքնամաքրման ճանապարհով, թե՞ ոչ: Եթե մենք իսկապես ունենանք նշածս իմաստությունն ու կարողանանք գիտակցել, որ փոփոխությունն անհրաժեշտ է եւ ունենանք կամքի նման ուժ՝ այդ ամենը փոխելու, ուրեմն, ճշմարիտ ուղու վրա ենք:

Ընտրությունը յուրովի փորձություն է ժողովրդի համար: Տերունական աղոթքում պատահական չէ ասված՝ *մի տանիր զմեզ ի փորձություն:* Մի տեսակ մենք Աստծուն խնդրում ենք մեզ փորձության չտանել, բայց, ըստ իս, կատարելության հասնելու համար այլ ճանապարհ, քան փորձությունների միջով անցնելն է, չկա: Այսօր ազգովի կանգնել ենք ներթափանց փորձության առջեւ: Կոչ եմ անում մեր ժողովրդին՝ մի պահ կանգ առնել, հայացք նետել մեր անցած ճանապարհին, փորձել հասկանալ, թե որտեղ ենք այս պահին գտնվում եւ սրափ տրամաբանությամբ գնահատել ներքին ու արտաքին մարտահրավերները: Ու գնալ մաքուր, ազատ, արդար ընտրության...

Զրույցը՝  
ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆԻ